խան), Լիտրերնից եւ Խախուից՝, *հասնում է Վհկայ գուրը եւ խառնւում Թորդումին։ Օգեկ առ–ը աջ կողմից ընդունում է՝ Սիլեբեն առ–ը համանուն գեղից. իսկ ձախից ընդունում է՝* Խոջենց, Բագիր, Ալունցոր, Սրբահան. *իսկ* Կազան–բաշի *լեռներից իջնող* Ջիարէթ *առ–ը, որ սկիզբն է առնում Ջիարէթ լճից*, Ոլուխլի, *սկսւում է* Կոնդերից (*Թիքմէ*), Ջատոֆ, Գոչուն *աւերակներից, որոնք ոռոգում են* Փաշա–Փազի[2],

---

[1] *Խախու վանքի անունն ու հռչակաւոր Մեծամոր տաճարը յիշեցնում է պատմական Խախ գեղը - Լուսաւորչի կալուածը։ Այս գեղի իսկական անունը նոյնպէս Խախ է բայց կոչում է Խախու վանք՝ սեռական հոլովով։ Այս տաճարը ոչ միայն մեծութեամբ, գմբէթով եւ գեղեցկութեամբ անհամեմատ բարձր է Երզնկայի Խաչ-ից. այլ սրա մօտ գտնուած լճակներն ու վիշապական արձանները կասկած են բարձրացնում, թէ արդեօք այս չէ՞ իսկական Խախը։ Մանաւանդ Ոլուխլի ձորի մշտագալար մարգերը արդեօք Անահտին նուիրուած սպիտակ արջառների եւ ձիերի արօտները չէին։*

[2] *Գոչուն եւ Ջիարէթ (Ջուհուրաթ) առ-ի ակունքի մօտ են Փաշա-Փազի աւերակները. որոնց ճորոխի ակունքի՝ Ներմես վտակի բղխած վայրից ընդ ամենը 5-կիլոմետր հեռաւորութիւն ունին եւ սրանց իրարից բաժանում է Կազան-Բաշի գ-ը։ Ինչպէս ընդարձակ է բազմազան շինութիւններով Ցուրեն Շէհերի աւերակներ Ներմեսի, Կարագաջի ակունքների մօտ, նոյնը նկատելի է Փաշա-Փազում, այն տարբերութեամբ, որ Փաշա-Փազում շատ երկար իրենց գոյութիւնը պահպանել են այդ աւերակները, մինչեւ Լալա-Փաշայի խժդժութիւնները. այն ինչ Ցուրեն-Շէհերը նրանից 4—5 դար առաջ կործանուած է եղել։ Երեւում է, որ Փաշա-Փազի կալուածատերերը ժամանակին ճկունացել, յարմարուել են Սելջուք եւ Օսմանեան վարիչների հետ, տիրել են իրենց ժառանգական կալուածներին կարեւոր հարկն ու տուրքը վճարելով, քաշ*